



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



L 6 n
745

1999

3

ԻՆՉ Է ՄԵՐ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ

ԵՐ

ԻՆՉ Է ԱՆՈՐ ԴԱՐՄԱՆԸ



276



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
— 1872 —

U.S. DEPARTMENT OF THE INTERIOR

GEORGE W. BRIDGES



1875

Հասարակօրէն մարդս՝ իւր երջանկութեան միջոցը
չճանչնալովը՝ զերջանկութիւնը կորսնցնելու պատճառ
կըլլայ: Սկիզբէն առաջին մարդէն սկսեց աս մոլորու-
թիւնը: Կրօնքը որն որ մարդուս երջանկութեան մէկ
հատիկ միջոցն է, մարդուս իւր առաջին վայրկեանէն
սկսեց, բայց ինքը հետզհետէ կրօնքին շիտակ շաւիղէն
շեղելովը աշխարհին ամէն կողմը այս ցաւալի մոլորու-
թիւնը զանազան կերպարանքներու մտաւ, ըստ որում
ճշմարտութիւնը մէկ մի է ու մոլորութիւնը անհամար:
Այս ասանկ ըլլալուն վրայ դարձեալ ճշմարիտ կրօնքը
որուն հիմը անխախտելի ու զօրութիւնը անյաղթելի է,
որչափ ալ որ կրօնական մոլորութիւնները բազմացան
ալ նէ, նոյն իսկ ճշմարիտ կրօնքը Աստուծոյ ընտրեալ
հօտին մէջ միշտ մնաց անխախտելի և անյաղթելի և պի-
տի մնայ մինչեւ ցվերջը, նաև որոնք որ մոլորեցան շե-
ղեցան յաջ և յահեակ՝ դարձեալ կրօնքին գոյութիւնը
չուրացան միայն թէ սուտ կրօնքը ճշմարտի տեղ բռ-
նեցին, կամ ունեցած ճշմարիտ կրօնքին աղաւաղեցին:

Բայց ափսոս աս տեղն ալ չմնաց մարդկային մոլո-
րութեան ողբալի արշաւանքը, վասն զի ալ առաջ նետ-
ուելով երազեցին ուրանալ նաև իսկ կրօնքին գոյութիւ-
նը: Անանկ ծաղրական մոլորութիւն մը որ շատ դիւրին
էր թէ մարդ ուրանար իւր գոյութիւնը՝ քան թէ կրօն-
քին գոյութիւնը: Որուն գոյութիւնը յզկզբաննէ աշ-
խարհի այնչափ դարերէ ՚ի վեր բնական ու գերբնական
լուսով ճանչցուած ու անյաղթելի փաստերով հաստա-
տուած է: Ինչպէս բաւական ցոյց տված են շատ երե-

276

4 745. 60

29. 746

ւելի հեղինակներ Թատասոն և ուրիշները : Այ միայն կը-
 բօնքին գոյութիւնը , նաև ճշմարիտ կրօնքը ո՛րն ըլլալը ,
 և անոր հարկաւորութիւնը թէ յաւիտենական երջան-
 կութեան և թէ ժամանակաւոր կենացոյ հանգստու-
 թեան և չն . և չն :

Եւ յիրաւի ինչպէս որ ճշմարիտ կրօնքին գոյութիւ-
 նը թէ աս և թէ անախ կենաց երջանկութեան պատ-
 ճառն կըլլայ , անոր անգոյութիւնն ալ թէ աս և թէ
 հանդերձեալ կենաց թշուառութեան պատճառ կըլլայ
 մեզի : Եւ աս ճշմարտութիւնը անանկ ապացուցեալ ճըշ-
 մարտութիւն մըն է որ մինչեւ անգամ սուտ կամ աղա-
 ւաղեալ կրօնքը որն որ շուքն է ճշմարտին թէ և յաւի-
 տենական կենաց նկատմամբ բոլորովին վտանգաւոր ,
 բայց ժամանակաւորին համար մասամբ իւրիք հանդուր-
 ժելի , որ չէ անանկ վտանգաւոր ինչպէս որ անկրօնու-
 թիւնն է : Վասն զի գոնէ ընդունած կրօնքը ճշմարիտ գիտ-
 նալով խղճի դէմ չգործելու կարգին մէջ կը մնայ , բայց
 այն որ գոյութիւնը իսկ կուրանայ կրօնքին՝ առջեւը կը
 բացուի ամէն բան ազատօրէն աներկիւղ անխիղճ գոր-
 ծելու որեւիցէ չարութիւն և եղեռնագործութիւն : Արով
 մարդկային ընկերութիւնը սոսկալի վտանգներու մէջ
 կիյնայ : Աս բանը դարերէ ՚ի վեր փորձված ճշմար-
 տութիւն մի է , որն որ ուր տեղ որ կրօնքը յարգ ու
 պատիւ ունեցեր է , հոնտեղ աւելի հանգստութիւններ
 ու բարեկարգութիւններ հետեւեր է , և ուր տեղ որ ժա-
 մանակ որ կրօնքին պատիւը պակսեր է ան տեղ անտա-
 նելի թշուառութիւններ հետեւեր է , թողունք հեռու-
 ները ահա նոր դէպքը արիւնտ առաջընիս կեցած է :
 Քաղցիոյ Փարիզ փառաւոր քաղաքը աշխարհին մէջ , ու-
 բո՞նք էին յանդգնողները կրակին տալ , որո՞նք էին ան-
 չափ անմեղ արիւնները թափողը , որո՞նք էին այնչափ
 եկեղեցիներն ու եկեղեցականները բռնաբարողները ,

որո՞նք էին օրինաւոր իշխանութեանը դէմ այն արիւ-
 նահեղ սոսկալի ապստամբութիւնը համարձակողները
 և չն . և չն . չէ՞ որ կրօնքին գոյութիւնը ուրացող Քոմիւն
 ըստած զգուելի ընկերութիւնը՝ խռովեալ երեւակայու-
 թիւնով լեցուած գլուխները :

ԻՆՁ Է ԱՍՈՐ ԴԱՐՄԱՆԸ

Թէ որ Քաղցիա արթուն մնար հսկէր իւր տանը վը-
 րայ , աս դիչերագէմ գողը իւր տունը չէր մանար : Բայց
 երբոր վտանգին պատճառներուն արթուն չկեցաւ , հար-
 կաւ անկէց հետեւելու թշուառութիւններն ալ պիտի
 կրէր , ըստ որում ամեն գործ իւր պատճառէն կը հե-
 տելի :

Թէ որ Քաղցիոյ անգղուշութիւնը այնչափ սուղի
 նստաւ իւր վրայ , միթէ ուրիշ տէրութիւններ և ազգեր
 անզգոյշ ու անհոգ մնալով ազա՛տ պիտի մնան այն սեւ
 ու սոսկալի օրերը տեսնելու : Թէ որ անանկ իմաստու-
 թեամբ ծաղկած ազգ մը այնպիսի տաղնապ կրեց , ո՛ր-
 չափ աւելի ուրիշները կրելու են , թէ որ անհոգ ու
 անզգուշութեան քնովը թմբած մնան : Վասնորոյ այս
 աշխարհաւէր վտանգին դէմ բոլոր ամէն կարգի մարդ-
 կանց կողմանէ մեծամեծ հսկողութիւններ զգուշութիւն-
 ներ կը հարկաւորի : Սմենելին երես տալու չէ անանկ-
 ներուն որոնք կրօնքի գոյութեան դէմ ամենափոքր
 հարուած մը տալու կը յանդգնին կամ անարգել կուզեն
 կրօնքին դաղափարը : Հարկ է որ անանկները անարժան
 համարել պատուոյ , ու մահադեղ մարդկային ընկերու-
 թեան , և անընդունակ և անյարմար որեւիցէ պաշտօնի
 թէ իշխանութեան , թէ վաճառականութեան և թէ որ

և իցէ ծառայութեան, մէկ խօսքով անհաւատարիմ և հասկածելի համարել անանկները ամէն բանի մէջ, չը հաւատալ անանկներուն և ո՛չ թեթեւ պաշտօն մը կամ գործ մը: Որով երկու օգուտ կրնայ յառաջ գալ՝ մէյ մը որ անկրօն ու անխիղճ մարդու մը ձեռօք ըլլալիք անիրաւութեան և գեշութեան փրաններէն կազատինք, երկրորդ՝ տեսնալով որ իրենց անկրօնութիւնը իրենց պատուոյն և օգտէն կը զրկէ զիրենք, կ'ստիպուին դառնալ յանկրօնութենէ և ուրիշներուն ալ զգուշութեան առիթ մը կըլլայ կամ գոնէ բարոյական ազդեցութիւննին տկարանալով անկարող կըլլան մեծամեծ խռովութիւններ յարուցանելու և հասարակաց հանգստութիւնը աւրելու: Վասն զի կրօնքի գոյութիւնը ուրանալէն կամ կրօնքի յարգ չունենալէն անմիջապէս կը ծագի աներկիւղ ու անխիղճ ըլլալը և աներկիւղ ու անխիղճ ըլլալէն կը ծագի յանդգնութիւն ու համարձակութիւն ամէն չարութիւն ու եղեռնագործութիւն ընելու, վասն զի ամէն գործ իւր պատճառէն կախում ունի: Ուրեմն որչափ վտանգաւոր է անանկներուն որեւիցէ բան մը հաւատալ կամ վստահիլ, ապա թէ ոչ հարկաւ անկէց յառաջ գալիք փրաններէն ազատելու ճար չի կայ: Գայլը հովիւ ընտրել, օձը ծոցը ընդունել ըսել կըլլայ:



ՄՆՈՂԱՅ ԸՆԵՂՈՒ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆԸ ԶԱԽՆԵՐՆՈՒՆ ՎՐԱՅ

Մասնաւորապէս ծնողաց պարտքն է սաստիկ զգուշութիւն ընել զաւակներնուն վրայ: Որչափ հնար է հեռու պահեն իւրեանց զաւակները այն առիթներէն որոնցմէ որ կրնան գայթակղիլ գոյութեան վրայ կրօնքի: Հեռի պահելու է գայթակղիչ մարդկանց ու տղայոց կենակցութենէ ու խօսակցութենէ, հեռու պահելու է ան

զրքերէն որոնք որ կը թունաւորեն մարդու իմացականութիւնը: Այն դպրոցներն որոնք որ կասկածելի են կամ թէ չունին զգուշութիւն ու հոգ չեն տանիր աշակերտաց վրայ հսկելու ան զարհուրելի բարոյական ախտէն, ամենեւին չը հաւատալ չը վստահիլ իրենց զաւակները, որ և իցէ ուսման կամ արհեստի նկատմամբ, ապա թէ ո՛չ իրենց ձեռօք մատնած կըլլան այն մատաղ գաւռնակները՝ արեան արբու գայլերուն: Բարոյապէս մեռած կըլլան այն տղաքը բոլորովին թիւր և մուլար գաղափարներով գլուխնին լեցուելով և հետեւաբար վարքերնին ապականելով, որոնք հետ այնու մահադեղ կըլլան մարդկային ընկերութեան և բանի մը չենիգար: Մէկ խօսքով բարոյական պարտքերը չեն ճանչնար նաև ծաղրելով կ'անգոսնեն: Աւելի ողբալի է երբ որ կըլլան անանկ ծնողքներ որոնք զաւակներուն այս խեղճ վիճակը կը տեսնան ու չեն զգար, նաև կուրախանան թէ զաւակս այս ինչ լեզուն աղէկ կարտաբերէ կամ այս ինչ դիտութիւնը աղէկ կը ճառէ ըսելով կամաւոր կոյր կըլլան տեսնելու այս սոսկալի ընթացքնին, բայց մէկէն թմբուցութենէ կարթննան երբ որ կը տեսնան իւրեանց հայրական յարգն ու պատիւն ալ կոխոտած իրենց զաւակաց ոտքին ներքեւը:

Ան տեսն կիմանան իրենց զաւակին սոսկալի հրէշի մը փոխուիլը, բայց շատ ու՛շ:

Տղումը կամ աղջկանմը ախորժակը կամ իմացականութիւնը աղէկ կըթելու համար բարոյականին հոգ ասանող, և զգուշաւոր դպրոցի յանձնելու է կամ կարողութիւն ունեցող հայրերը կամ մայրերը ճիշդ ու ճշմարիտ աղէկ գաղաբարներ զաւակներուն մտքին մէջ տպաւորելու են, դեռ անկրօնութեան դարչելի հոտը չ'առած կանուխ ժամանակաւ տպաւորելու է անոնց մտքերնուն մէջ կրօնական գաղափար և յարգը՝ կարգալ տալ կրօնական ըս-

կըզբանց գրքերը, ակիղբը պարզէն ու դիւրիւնէն սկը-
սելով մինչեւ որ հասակնուն հետ ուսումը աճելով ա-
ւելի ընդարձակին երթալով հետզհետէ կրօնքի վրայ
ճիշդ ու ճշմարիտ գաղաբարներ ունենայ, վասն որոյ
ընտրելի է ճշմարիտ կրօնքի գաղաբարներ տուող գրք-
քերը, որով ո՛չ միայն ճանչնայ կրօնքին գոյութիւնը,
այլև կրօնքին ճշմարիտը ո՛րն ըլլալը:

Աւելի օգուտ կըլլայ նաև հարկ է հող տանիլ տղա-
յոց միտքը կրթելու որուն դատողութիւնը շիտկի ու շի-
տակ դասելու ու շիտակ հետեւութիւններ հանելու ու
մոլոր իմաստակութեան շիյնալու վարժուած ըլլայ: Ին-
չու որ շիտակ կրօնքը շիտակ դատողութեամբ աւելի
դիւրաւ կը բռնուի. վասն զի ոչ երբէք ճշմարիտը ճըշ-
մարտին հակառակ կրնայ ըլլալ: Միտքը կրթելու ա-
ղէկ կը ծառայեն տրամաբանական ու մաթիմաթիքա-
կան ուսմունքները:

Նաև բարոյական գաղաբարները՝ արդարութեան հը-
նաղանդութեան, պարկեշտութեան, խոնարհութեան
ևն. սովորեցնելու հող տանիլ որոնք աղէկ կը ծառա-
յեն կրօնքի գաղափարաց: Միանգամայն ծանուցանել
անոնց մոլութեան գաղաբարները և թէ որչափ ատելի
ու զգուելի և վտանգաւոր են նկարագրել աչքերնուն ա-
ռաջքը: Վասն զի շատ անգամ մոլութիւնները ճամ-
բայ կը բանան անկրօնութեան: Յափշտակող անիրաւի
մը, նախանձողի մը, արբեցողի մը, մարդասպանի մը
կրօնքին գոյութիւնը կը հակառակի:



ԱՍ ՆԻԻԹԻՆ ՏԱՐԱԿՈՒՍԵԼԻ ՄԻԻՍ ԿԵՏՐ

Հիմայ մնաց բանը այն տարակուսելի կէտին վրայ,
որ թէպէտ ճշմարիտ կրօնքը մէյ մըն է և միւսները

առաւ կամ աղաւաղեալ, բայց ամէն մէկը իւր ընդու-
նածն ճշմարիտ գիտնալովը միւսները անգոսնել ուզե-
լովը՝ անուղղակի կերպով դարձեալ կրօնքին յարգը գե-
տինը կը զարնուի: Ըստ որում ճշմարիտ կրօնքը որ իրա-
ւամբ կը մերժէ սուտերը և աղաւաղեալները, փոխա-
դարձաբար թէև յանիրաւի կը մերժուի և կը հալածուի
ինքն ալ անոնցմէ որով դարձեալ կրօնքին յարգը կը
պակսի: Ասոր ի՞նչ դարման կրնայ ըլլար:

Թէ որ կիրքն ու նախապաշարմունքը, անձնասիրու-
թիւնը և ուրիշ ասոնց պէս խոչնդոտները մէկդի ձգվի
նէ աս տեղն ալ տարակուսելի դժուարութիւն մը չի
մնար: Ըստորում կրօնքը Աստուծոյ կը վերաբերի և ո՛չ
ուրիշ ազգի մը կամ անձի մը. վասն որոյ չի կրնար ըս-
վիլ քոյ կրօնքդ կամ իմ կրօնքս, ուրեմն չի կրնար ըս-
վիլ թէ քու կրօնքդ թիւր է իմն շիտակ է, այլ կրնայ
ըսվիլ որ դուն շիտակ կամ սխալ կրօնքի մէջ գտնուե-
ցար, վասն զի ո՛չ մէկը և ո՛չ մէկալը նաև ճշմարիտ կը-
րօնքի մէջ ըլլացողն ալ չի կրնար պարծիլ որ ես շիտակ
կրօնք ունիմ ըստ որում մէջը գտնուեցաւ և ոչ թէ ին-
քը ստացաւ. ուրեմն Աստուծոյ նախախնամութիւնը զին-
քը ինայելը՝ իւր սնապարծութեան դործիք չի կրնար
ըլլալ, թէ որ պարծենալու տեղիք մը ըլլար նէ թիւր
կրօնքի մը մէջ ծնած ու ետքը ինքը որունելով գտնողը
պիտի ըլլար: Բայց աս ալ չի կրնար պարծիլ ըստորում
ան ալ աստուածային նախախնամութեան արդիւնքն է,
ապա թէ ոչ անհնար էր ինքզինքը շտկել դէպ ի ճշմա-
րիտ հաւատքը իյնալու, ուրեմն ըստ ամենայնի բան մը
չի մնար մարդս իրեն իւրացնելու, ասկէց կը հետեւի որ
միմեանց պարծենալու կամ նախանձելու ընաւ առիթ
մը չի մնար: Վասնորոյ կրօնքը իւրացնելու թիւր սկըզ-
բունքը լուծվելով կրօնքը անարգելու տարակուսելի
կէտն ալ կը վերնայ, և ասկէց կը բացվի միմեանց կա-

բեկից ըլլալու գաղափարը որ միւսինը թիւր գիտցողը անոր վրայ պիտի կարեկցի, և այս կարեկցութեան հետ ճշմարտասիրութեան ոգին ալ վառված ըլլայ նէ ան ատենը շատերը որոշելով ճշմարիտը սուտէն, ճշմարտին կը հետեւէին: Որով ոչ միայն կրօնքի անարգութիւնը ու անկրօնութիւնն աւելի կը նուազէր, այլև սուտ և աղաւաղեալ կրօնքներն ալ կը նուազէին: Յորմէ կը նուազէին թշուառութիւնը մարդկային ազգի, ու երկնային երջանկութեան հասնելու ճանապարհին մէջ ի յնողները կը շատնային:



ԱՍ ՎԱՆՃԱՆԻՍ ՀԱՄԱԵԼՈՒ ԳԼԽԱԻՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ըստ որում ամէն կրօնասէրք միաբան են աս կէտին որ կրօնքը կայ միայն թէ ճշմարիտ կրօնքին որոշման վրայ անմիաբան են, ուրեմն ոչ թէ մէկը մէկալը անգոմնելու աշխատելու է, այլ ճշմարիտը որոշելու ջանալու համար հետեւեալ ընթացքը բռնելու է:

Նախ՝ չպիտի ըսել որ ըստորում ես աս կրօնքին մէջն եմ հարկաւ պիտի պաշտպանեմ, վասնզի ասիկայ ճշմարտութիւն պաշտպանել չէ այլ իւր յամառութիւնը:

2. Ըսել թէ հաւատքի վրայ չպիտի երկբայիլ: Իրաւ որ աս խօսքս ճշմարիտ է քննելէն ու ըստ ամենայնի ստուգուելէն զկնի: Բայց թէ որ սուտ կամ աղաւաղեալ է ու դուն անիկայ իբր ճշմարիտ գիտես, աս խօսքը քեզի համար չէ, վասնզի աս խօսքը ճշմարիտ հաւատքի մը համար փրկութիւն է, բայց սուտ կամ աղաւաղեալի մը համար կորուստ:

3. Հաւատոյ փոփոխութիւնը աղէկ չէ ըսելը, որ ըսել է թէ որուն մէջ որ գտնուեցար հոն մնալու է թէ ճշմարիտ ըլլայ թէ սուտ, որ աս ալ յայտնի մոլորութիւն է:

4. Չպիտի ըսել որ, ինչ որ գտերեմանկեց չեմ շարժիր Հօրմէս ու մեծերէս ասանկ գտայ ասանկ կերթամ ուրեմն պէտք է որ կռապաշտներնալ իրենց մոլոր կրօնքին մէջ անխախտ մնան ու հօրերնուն պէս կռապաշտ մեռնին:

5. Նաև աս՝ թէ, իմ կրօնքիս մէջ ասքան մարդիկ ասքան խելացիներ կան անհնար է թէ սրխալած ըլլան, բայց շատ սուտ կրօնքի մէջ շատ մարդիկ ու շատ խելացիներ կան, ինչպէս հին Եգիպտացիք շատ մարդիկ ու շատ խելացիներով սուտ կրօնքի մէջ էին՝ և այլ այսպէս շատերը:

6. Ասքան մարդիկ իմ կրօնքէս կան, անոնք ուր երթանն է ես ալ հոն կերթամ, որ ըսել է անոնք խենդեցանն է եսալ պէտք է որ խենդենամ. ասոնցպէս շատ մը անպետ ու բանականութեան դէմ խօսքեր կան որոնց ամէննալ մէկ կողմ ձգելու է:

7. Ըսկտե՛ք է՝ քննել որոնել որոշ և ճիշդ գաղափարը կրօնքին ու խմայլ թէ ի՞նչ է կրօնքը, ու ի՞նչ յատկութիւն ունի՝ յետոյ բաղդատել կրօնքները, այն ճիշդ և ճշմարիտ գաղափարին կրօնքին ու մանրամասնաբար քննել թէ՛ որք կը համաձայնի կամ ո՞րը չը համաձայնի ասանկով որոշել ճշմարիտ կրօնքը՝ սուտ և աղաւաղեալ կրօնքներէն:

8. Բայց աւելի հոգ տանելու է ճիշդ և որոշ և ճշմարիտ գաղափարը կրօնքին ստանալու, ապա թէ ո՞չ մէկ մոլորութենէ մէկալը կիյնայ, վասն զի չի կրնար մէկը բանի մը սուտը ճշմարտէն որոշել մինչև որ ճշմարտին ճիշդ գաղափարը չունենայ կամ չի կրնար անկատարութիւնը որոշել մինչև որ կատարեալին գաղափարը չունենայ: Չոր օրինակ ընտոր կրնայ մէկը ճշմարիտ անգամանդը սուտէն որոշել, երբոր առաջուց ճշմարիտ անգամանդին գաղափարը չունենայ:

9. Մէկ մեծ մուրուսթեան պատճառնալ տսէ որ երբոր բաւական չքննած կամ քննած ու բաւական չբնականը ըլլալով, ստացած սուտ գաղափարնիս ճշմարիտ դիտնալով ու անով բաղդատութիւն ընելով սուտ հետեւութեանը կը խաբւիինք, վասն զի սուտ կըրօնքի գաղափարը ճշմարիտ դիտնալով սուտ կըրօնքի համաձայնելովը այն սուտ կըրօնքը ճշմարիտ կը բռնեմք կամ կը պատահէ որ գաղափարը շիտակ կըլլայ ու բաղդատութիւնը վերի վերոյ ըրած կըլլամք և դարձեալ այս կերպով ալ կըրնայ սըխալիլ: Վասն որոյ դիւրաւ հաւատալու չէ թէ յետ բաւական քննութեան աղեկի մայանք ու սըխալած չեմք:

Սոնր համար նա և պէտք չէ դժկամակիլ մեր գաղափարին ու գատմանը հակառակը խօսողին դէմ, այլ պէտք է քննել թէ ինչպիսի ապացուցի վրայ հաստատուած է իւր խօսքը, գուցէ մեզի դէմ խօսողէն օգնութիւն մը առած կըլլամք, մեր թիւր դատողութիւնը շիտակելու: Նա և մենք մեզէն պիտի առաջարկենք մեր ստացած գաղափարը հմուտ ու անկողմնասէր ու մտքերնին աղեկ կըթած երկիւղած անձինքներու որ զուրջն համարձակ մեր ծանօթութեանց որպիսութեանը վրայ իրենց զգացումը ու գատումը:

10. Հարկ անհրաժեշտ է, ամէն կերպով հոգ տանիլ ուզիլ խորհելու կանոնին համաձայն շարժիլ ու հեռի կենալ ամէն տեսակ մուրուսթենէ և իմաստակութենէ ինչպէս որ կը սովբեցունեն ողջամիտ տրամաբանները:

11. Մէկ խօսքով ամէն տեսակ նախապաշարմունքներէ երեւակայական սուտ գաղափարներէ և կիրքերէ մերկանալով միայն ճշմարտութեան սիրովը վառվելու է:

12. Վերջապէս գլուխ ամենայնի, մեղքերէն զղալով և ամենափոքր մեղքերէ զգուշանալով անարատ վարքով մաքուր սրտով յԱստուծմէ լոյս ուզելու է: Վասն


զի հաւատքը գերբնական շնորհք մը ըլլալով Աստուծոյ շնորհքին կարօտ է և ան ալ չըլլար առանց անարատ և խոնարհ սրտով իրեն դիմելու յարատեւելով յաղօթս և անանկ մերձենալ քննութեան ճշմարիտ հաւատոյ:

Մ . Յ . Խ .

226


A
100—
—
17
12
217

111
17
—
228
—
111



100
100
100
100
100

100
100
100
100
100



Գ/ն 1 զուրուշ

«Ազգային գրադարան»



NL0240349

